

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍէՆ

ԱՄՍՈՐԵԱՑ ԼԱՒՐԵՐ

◆ 3 Փետր. Ռւր. — Երեկոյեան ժամերգութեան ետք կատարուեցաւ վաղուան տօնին նախատօնակը Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեանի:

◆ 4 Փետր. Շր. — Ա. Ասազի օրավարին. Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին Ա. Ասազի հաղարեան մատրան մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պատամեան:

◆ 5 Փետր. Կիր. — Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պաշարեան:

◆ 6 Փետր. Եշ. — Կէսօրէ առաջ, ժամը 11. 30-ին, Գեր. Տեղապահ Հօր այցելեցին Միջ. Կարմիր Խաչի ներկայացուցիչներ՝ Պր. Կատարին և Պր. Քնէսէվիչ, որոնք զետեղեցին նաև յարգանքի ձաղկեփունչ մը Հանգուցեալ Տ. Կիւրեղ Ա. Պատրիարք Հօր գերեզմանին վրայ:

◆ 11 Փետր. Շր. — Ա. Խանճակյան Պարեին. Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պատարագիչն էր Նորընծայ Հոգ. Տ. Դարերին Արեգայ Գաղանճեան, որ յետ ձեռնդրութեան իր Երեք շաբաթներու պահեցողութեան ըջանէն ետք, կը մատուցանէր իր անդրանիկ պատարագը, առընթերակայութեամբ իր վարժիշտուցիչին Հոգ. Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեանի:

— Գեր. Տեղապահ Հայրը ընորհաւորական հեռագիր տուաւ հ. Ա. Ֆարուք Թագաւորի ծնընդիւան տարեղարձին առթիւ:

— Կէսօրէ առաջ, ժամը 10.30-ին, ի զիւաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Առանեան ներկայ գտնուեցաւ Փրանչիսկեան միաբանութեան նորընտիր Կիւրմատ Գեր. Հայր Ճիւասինթօ Ֆաշիոյի՝ Փրանչիսկեաններու վանքէն ներս մուտքի հանդիսութեանց:

◆ 12 Փետր. Կիր. — Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պատարագիչն էր Ա. Յարութեան Մանուար Հոգ. Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեան, Մանուար կարգագործեամբ Ա. Պատարագին կը սպասաւորէր Հոգ. Տ. Ֆարեգին նորընծայ Արեգայ Գաղանճեան հաւաանինթօ Ֆաշիոյի Ա. Յարութեան Տաճար մուտքի հանդէսին:

— Եթումիջօրէին, ժամը 3.30-ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Տ. Տ. Հայրիկ և Միւռու վարդապետաց, ներկայ գտնուեցաւ Փըրանչիսկեաններու նորընտիր Կիւրմատ Գեր. Հայր Ճիւասինթօ Ֆաշիոյի Ա. Յարութեան Տաճար մուտքի հանդէսին:

◆ 14 Փետր. Դէ. — Կէսօրէ առաջ, ժամը 10. 30-ին, Փրանչիսկեաններու նորընտիր Կիւրմատ իր առաջին այցելութիւնը տուաւ Գեր. Տեղապահ Հօր:

◆ 15 Փետր. Դէ. — Կէսօրէ առաջ, ժամը 10. 30-ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Տնօրէն ժողովոյ Հոգենորհ Հարց, Պոխազարձ այցելութեան գնաց Փրանչիսկեաններու Գեր. Կիւրմատին:

— Յետ երեկոյեան ժամերգութեան, կատարուեցաւ վաղուան տօնին նախատօնակը Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, հանդիսապետութեամբ Հոգ. Տ. Առողջ Վրդ. Արքահամեան, ընարան ունենալով «Եւ յեղին զարիւս իւրեանց ի նորոգումն Եկեղեցւոյ»:

◆ 16 Փետր. Եշ. — Ա. Վարդանանց օրավարացն, Հանդիսաւոր Ա. Պատարագը մատուցուեցաւ Քաղաքին Ասորւոց Ա. Մարկոս Եկեղեցւոյն մէջ, Պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Հայկապուն Վրդ. Արքահամեան, ընարան ունենալով՝ «Եւ յեղին զարիւս իւրեանց ի նորոգումն Եկեղեցւոյ»:

Օրուան արարողութեանց և Երթի ու վերապարձի պաշտօնական թափօրներուն կը նախագահէր Հոգ. Տ. Առողջ Վրդ. Վէրջնաճանակ Ա. Պատարագէն վերջ՝ վարդապետ Հայրեր պատուահրուցան Ասորւոց տեսչարանին մէջ:

◆ 17 Փետր. Շր. — Ըստ իրաւական սովորութեան, Ա. Պատարագը մատուցուեցաւ Քաղաքին Ասորւոց Ա. Մարկոս Եկեղեցւոյն մէջ, Պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Վարգե Վրդ. Արքահամեան պարմածածած Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Արքահամեան:

Օրուան արարողութեանց և Երթի ու վերապարձի պաշտօնական թափօրներուն կը նախագահէր Հոգ. Տ. Առողջ Վրդ. Վէրջնաճանակ Ա. Պատարագէն վերջ՝ վարդապետ Հայրեր պատուահրուցան Ասորւոց տեսչարանին մէջ:

◆ 18 Փետր. Շր. — Առաւօտեան ժամը 9-ին ի զիւաց Գեր. Տեղապահ Հօր, Ա. Աթոռոյոյ աւագ թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան ներկայ գտնուեցաւ լատինաց նորընտիր պատրիարքի ընդունելութեան՝ իրենց պատրիարքարանին մէջ, իսկ ժամը 11-ին ի Ա. Յարութեան՝ մուտքի հանդէսին:

◆ 19 Փետր. Կիր. — Բուն բարեկենդրսն վարագուեալ խորանի Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Պատարագին էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

◆ 22 Փետր. Դէ. — Երեկոյեան ժամը 7-ին, Գեր. Տեղապահ Հայրը պատրիարքարանի փաքք գալիքին մէջ, պատուոյ ընթրիքի սեղան մը տուաւ Պաղեստինի կառավարութեան աւագ քարտուղար Վասեմ. Ճամալ Պէկ Թուքանի, մութասարիֆ Խոհամ Պէկ Հաշիմի, Բնդէն. Դատակ Ճիւասինթօ Ֆաշիոյի և Ա. Տեղեցաց քարտուղար Նամիկ Պաւարչիի, Բնթրիքին ներկայ էին նաև միաբան Հոգենորհ վարդապետները:

◆ 23 Փետր. Եշ. — Այսօր սկսաւ Մեծ Պահոց յատուկ «Եկեղեցէ»ի ժամերգութեանները, որոնք պիտի շարունակուին ամէն Հինգչարթի մինչև Մեծ Պահոց աւարտը:

◆ 24 Փետր. Ռւր. — Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ ժողովական Հոգ. վարդապետներու ընորհաւորական այցելութեան տուաւ լատինաց նորընտիր պատրիարք Ամեն. Ալպերթ Կորիի:

— Երեկոյեան ժամերգութեանը և վաղուան

առնին նախատոնակը պաշտուեցաւ Ա. Թորոս Եկեղեցւոյն մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Նորայր Վ.րդ. Պօղարեանի:

● 25. Փետր. Եր. — Ա. Թէոդորոսի զօրավարին. Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Թորոս Եկեղեցւոյն մէջ. Պատարազին էր Հոգ. Տ. Միւլոն Վ.րդ. Կրճիկեան: Համաձայն Հաննէ պատմազրի (Յովհ. Եպս. Երուսալէմացի) Ա. Թորոս Եկեղեցւոյն կառուցուած է Ա. Յակոբի շրջավակէն ներկիլիկիոյ Եւեն Գ. Թագաւորէն, ի յիշատակ իր Թորոս Եղիօր որ սպանուտած էր եղիպատացիներու դէմ մղուած պատերազմին մէջ, Եկեղեցւոյն հիւսիսային կողմբ, աջակողման գասին մէջ, խոր մը կը ցուցակի ցարդ, իրեն գերեզման թուրոս արքայեղիօր, Եկեղեցւոյն հիմա կը ժառայէ նաև որպէս ցրչազրաց մատենապարան, Երուսաղէմի վանքին ձեռապիրներուն:

— Ցետմիջօրէի, ժամը 2-ին, նախագահութեամբ Եր. Տեղապահ Հօր, հոգենոր վարզապետ Հայրեր պաշտօնական թափօրով իջան Ա. Յարութեան Տահար, ուր մուտքի Հայաշափառի Հանգիստութենէն և Ա. Կերեզմանի ուստիէն ետք երեկոյեան Ժամերգութիւնը և Նախատօնակը պաշտուեցաւ վերնատան Բ. Խողգովայի մեր մատրան մէջ, Ապա, տեղի ունեցաւ երեկոյեան թափօրը Տնօրինական Որբավայրերու մէջ:

● 26. Փետր. Կիր. — Արքանման կիւրակէ, առաւտուն պաշտօնական զոյգ թափօրներով (առաջինը ժամը 6-ին, նախագահութեամբ Հոգ. Տ. Առքէն Վ.րդ. Քէմհանեանի, իսկ Երկնորդը ժամը 8-ին, նախագահութեամբ Գիր. Տեղապահ Հօր) վարդապետ Հայրեր իջան Ա. Յարութեան Տահար, ուր յետ առաւտան Ժամերգութեան, մատուցուեցաւ հանդիսաւոր Ա. Պատարազ վերնատան մեր մատուոյն մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Յակոբ Վ.րդ. Վարդապետան: Ա. Պատարազէն վերջի անեցաւ մեծահանդէս թափօր Քիստասոսի Ա. Գերեզմանին շուրջ, նախագահութեամբ Գիր. Տեղապահ Հօր Ապա, վարդապետ Հայրեր վլխաւորութեամբ Գիր. Տեղապահ Հօր պաշտօնական թափօրով վերապարձան մայրավանք:

— Ցետ երեկոյեան Ժամերգութեան, Ա. Յակոբանց Մայր Տահարին մէջ տեղի ունեցաւ վաղուան տօնին նախատօնակը և Տեղանընդառաջաչափ տօնին յատուկ կցորդ Հանդիսութիւնները, նախագահութեամբ Գիր. Տեղապահ Հօր:

Երեկոյին, վանքին բոլոր թաղերուն մէջ կը լառէին տօնին յատուկ խրախնական - նուիրական խարոյիները, մասցոր մեր հեթանոսական օրերու սովորութիւններուն:


● 27. Փետր. Բէ. — Տեղանընդառաջաչափ, (Տօն քառանորեայ գալստեանն Քրիստոսի ի Տահարն):

Հանդիսաւոր Ա. Պատարազը Ա. Յակոբեանց Մայր Տահարին մէջ, մատոյց Հոգ. Տ. Նորայր Վ.րդ. Պօղարեան:

— Կէսօրէ առաջ, ժամը 10.30-ին, Գիր. Տեղապահ Հօր այցելեց լատինաց նորընտիր պատրիարքը Ա.մեն. Ալոքէթօ Կորի իր հետեւորզներով:

— Կէսօրէ առաջ, ժամը 11.30-ին, Գիր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վ.րդ. Աւանեսանի և Ա. Աթոռոյց քարտուղար Գիր. Կարպիս Հինդիսանի, այցելեց Երուսաղէմի Ընդհանուր Ամերիկան Հիւապասոսին:

— Ցետմիջօրէի, ժամը 6-ին, Գիր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վ.րդ. Աւանեսանի և Գիր. Կ. Հինդիսանի, Ներկայ գլուխեցաւ Պաղեստինի աւագ քարտուղար Վ.սեմ. Ժամաւ Պէկ Թու քանի կողմէ տրուած Երեկոյթին:



ՀԱՆԳԻՍ

ԱԿՐՉՐ. Տ. ԿԱՐՈՊԵՏ ԱՐՔԵՒԳՈՒ.

ԹՈՒՄՈՒՆԵԱԾԿՐ

Ամենայն Հայոց Գիհ. Հայրապետէն յդուած հեռագրէ մը, խոր ցաւով կ'իմանանք մահը Ա. Եցմիածնի Միաբաններէն բարձրաշնորհ Տ. Կարպահն Արքիս. Թումունեանի:

Հանգուցալ Որբազնը Գիհ. Տ. Գիորգ Զ. Արքանցուն Հայրապետի ճիկերով 1940-ին վերջ վերականգնակ Ա. Էջմիածնի Միաբանութեան ամենէն այրառու անդամներէն մին Եր. 1945 թուլիս 1-ին ծեննադրուած էր եաբուրպոս, Գիհ. Գիորգ Զ. Հայրապետէն և նշանակուած Վրաստանի թեմին առանդորդ ու այդ առթիւ պատուած արրութեան սիստոսով:

Ս. Աթոռոյց Պատրիարքական Տեղապահ Գիհ. Տ. Յակոբանց Մայր Տահար Ա. Յարութեամբ Ա. Ակապուտիս հոգիւութեամբ Ա. Վակիրեան առաջարկուած էր յայտնէ իր վիշտն ու ցաւակցութիւնը Ամենայն Հայոց Գիհ. Հայրապետին եւ Ա. Էջմիածնի Պատրիարքի Ա. Պատարազէն վերջեւոյ հաւատարիմ և զործունեաց պաշտօնէրն վաղահան մահուան առթիւ:

Օրնէնք իր յիշատակին եւ երկնային հանգիստ իր հոգիին:

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.